ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Արդյունք 1. Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի անտառային տարածքները տրանսֆորմացիայի են ենթարկվել ավելի կայուն և «բնականին մոտ» տարածքների:

Արդյունք 2. Մշակվել, հրատարակվել և համապատասխան պաշտոնյաներին ու փորձագետներին տրամադրվել են միատարր ծառուտները տրանսֆորմացիայի ենթարկելու անտառմշակութային ուղեցույցներ՝ հետագայում ծրագրի ավարտից հետո ավելի լայն կիրառելու համար:

Արդյունք 3. Ավելացել են անտառային ոլորտի աշխատողների ունակությունները միատարր անտառները տրանսֆորմացիայի ենթարկելու ոլորտում:

Արդյունք 4. Բարձրացել է տեղական համայնքների իրազեկությունը կլիմայի փոփոխության բացասական բիոտիկ և աբիոտիկ հետևանքների նվազեցման նպատակով անտառվերականգնում իրականացնելու կարևորության վերաբերյալ:

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

2011թ-ի դեկտեմբերի 29-ին WWF-Հայաստանի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր ընտրված պիլոտային տարածքներում 150 հա ընդհանուր մակերեսով միատարր անտառային ծառուտները տրասնֆորմացիայի ենթարկելու վերաբերյալ:

Հուշագիրը կհանդիսանա գործընկերության և համագործակցության հիմք՝ ի նպաստ ծրագրի գործողությունների սահուն իրականացմանը:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել.

WWF-Հայաստան
ՀՀ, Երևան 0019, Պռոշյան 11,
Հեռ/Ֆաքս. +374 (10) 58 89 83, 54 61 56
էլ. փոստ՝ office@wwfcaucasus.am

Ինտերնետային կայք՝ www.panda.org/armenia

Սույն բրոշյուրը պատրաստվել է
WWF-Հայաստանյան գրասենյակի կողմից
Եվրոպական միության աջակցությամբ:

Բրոշյուրում զետեղված բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Այս ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրամիության կողմից:



ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» տարածաշրջանային ծրագիրն իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF-Հայաստան) կողմից Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում WWF-Գերմանիայի ղեկավարությամբ: Հայաստանում ծրագիրն իրականացնում է WWF-Հայաստանը: Ծրագրի տևողությունը 3 տարի է (2011-2014): Այն նպատակաուղղված է միատարր անտառտնկարկները տրանսֆորմացիայի ենթարկելու գործողությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ արդյունքում կլիմայի փոփոխության նկատմամբ ավելի կայուն և «բնականին մոտ» անտառային տարածքներ ունենալու համար:
Դա կիրականացվի անտառների վրա կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ իրազեկության բարձրացման, անտառներն ավելի կայուն դարձնելու գործնական միջոցառումների ցուցադրման, ինչպես նաև անտառային ոլորտի անձնակազմին, անտառօգտագործող համայնքներին, տեղական ՀԿ-ներին և համայնքահեն կազմակերպություններին տրանսֆորմացիայի միջոցառումների մշակման և իրականացման անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու միջոցով:

ՆՊԱՏԱԿ

Ծրագրի ընդհանուր նպատակն է բարձրացնել Հարավային Կովկասի անտառային էկոհամակարգերի դիմադրողականությունը կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ և բարելավել կենսաբազմազանությունն ու տեղական բնակչության կենսամիջոցները:
Ծրագրի հատուկ նպատակ է անտառկառավարող մարմնի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի մշակվեն և իրականացվեն ռազմավարություններ միատարր անտառտնկարկները տրանսֆորմացիայի ենթարկելու ուղղությամբ՝ արդյունքում կլիմայի փոփոխության նկատմամբ ավելի կայուն և «բնականին մոտ» տարածքներ ունենալու համար:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի գործողությունները խմբավորված են 4 հիմնական բաղադրիչներում

- Հետազոտություն և պիլոտային տարածքներում տրանսֆորմացիայի միջոցառումների իրականացում
- Տեղեկատվության տարածում
- Հզորությունների ստեղծում
- Իրազեկության բարձրացում

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

- Պիլոտային տարածքներին հարակից տեղական համայնքներ
- Տեղական ՀԿ-ներ և համայնքահեն կազմակերպություններ
- Պետական անտառկառավարող մարմին

ՊԻԼՈՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ սերտ համագործակցությամբ Հայաստանում ընտրվել են 2 պիլոտային տարածքներ՝ 150 հա ընդհանուր մակերեսով:

- Պիլոտային տարածք N1.«Սպիտակ», ընդհանուր 72 հա, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի անտառտնտեսության Սպիտակի անտառապետությունում (Լոռու մարզ):
- Պիլոտային տարածք N2.«Նոյեմբերյան», ընդհանուր 78 հա, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Կողբի անտառապետությունում (Տավուշի մարզ):

Անտառի տրանսֆորմացիայի պլանների մշակումից հետո այս տարածքներում կիրականացվեն տրանսֆորմացիայի միջոցառումներ: